Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 17-06-2025 թ. որոշմամբ
««ՔԱԹԼԻՍԹ» ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՔԱԹԼԻՍԹ» ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՎԱՂԱՐՇՅԱՆ 1 46
1.3 Պետական գրանցման համարը		222.160.963879
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2017-06-21
1.5 ՀՎՀՀ-ն		00167405
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)96005707
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.catalyst.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@freeway.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Աշոտ Արզումանյան		
Համբարձում Քաղկեցյան		
Վազգեն Հակոբջանյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Աշոտ Արզումանյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	6	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում (ԳՄՀԸ)	12,238,485
	Վերականգնվող դրամաշնորհի փորձնական ծրագիր	10,397,750

Digitally signed by MELIKSETYAN VAHE 1305830172
Date: 2025.06.20 17:25:36 AMST

	Արհեստական բանականության ինկուբատոր (ՀԵԵՀ)	815,440
	Գիտությունների ու տեխնոլոգիաների համախմբման գիտաժողովի կազմակերպում	32,543,745
	«Համատեղ աշխատանք» ծառայությունների համար	6,230,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	«Համատեղ աշխատանք» ծառայությունների համար	5,902,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում (ԳՄՀԸ)	11,690,654	
Գիտությունների ու տեխնոլոգիաների համախմբման գիտաժողովի կազմակերպում	27,212,429	
Վերականգնվող դրամաշնորհի փորձնական ծրագիր	10,397,750	
Արհեստական բանականության ինկուբատոր (ՀԵԵՀ)	815,440	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	50,116,273	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	50,116,273	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 19 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՔԱԹԸԼԻՍԹ» ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ և ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝auditservicellc@gmail.com, վեբկայք՝www.auditservice.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՔԱԹԸԼԻՍԹ» ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ և ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ՔԱԹԸԼԻՍԹ» ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ և ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Հիմնադրամի նախորդ՝ 2022թ. ֆինանսական հաշվետվությունները աուդիտի է ենթարկել «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲ ընկերությունը և իր 07.06.2023թ-ին թվագրված աուդիտորական եզրակացությամբ արտահայտել է չձևափոխված կարծիք:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը

սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամիանընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներիդրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան, 27.06.2024թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոռ Դավթյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» "PKF AUDIT SERVICES" 00419022

Որակավորված աուդիտոր՝ Արփինե Խաչատրյան

Բովանդակություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 3

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 4

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ 5

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6

«ՔԱԹԸԼԻՍԹ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման հիմնադրամի
ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	**Ծնթգ.**	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	2552	3618
Ֆինվարձակալությամբ ստացված հիմնական միջոց.		67783	67783
Ոչ նյութական ակտիվներ	9	1001	1145
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**71336**	**72546**
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր	10	2151	5884
Տրամադրված կարճաժամկետ փոխառություններ		63470	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	18266	64311
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**83887**	**70195**
Ընդամենը ակտիվներ		**155223**	**142741**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ֆինվարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ	6	57309	57309
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**57309**	**57309**
Զուտ ակտիվներ		5645	(871)
Ընդամենը զուտ ակտիվներ		**5645**	**(871)**
Ընթացիկ պարտավորություններ			
Ֆինվարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ		10474	10474
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	17282	-
Հետաձգված եկամուտներ		49531	53552
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին		3734	982
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ		11248	21295
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**92269**	**86303**
Ընդամենը պարտավորություններ		**155223**	**142741**

Սույն Ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 27.06.2024թ.:

6-15 էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինասական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ՔԱԹԸԼԻՍԹ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման հիմնադրամ
Տնօրեն Ս. Արզումանյան

«Ֆրիվեյ Ֆայնանս» ՓԲԸ
Տնօրեն՝ Վ. Մելիքսեթյան

«ՔԱԹԸԼԻՍԹ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման հիմնադրամի
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	**Ծնթգ.**	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Անհատույց մուտքերից եկամուտներ	5	39634	28249
Ակտիվներին վերաբերվող շնորհներից եկամուտ	5	24354	162709
Ընդամենը եկամուտ		**63988**	**190958**
Հատկացումներ աշխատակիցներին	6	(27331)	(116461)
Մաշվածության գծով ծախսեր	6	(1297)	(1334)
Այլ ծախսեր	6	(39936)	(59372)
Ընդամենը ծախս		(68564)	(177167)
Գործառնական այլ եկամուտ/ծախս	7	9451	0
Գործառնական գործունեության արդյունք		**4875**	**13791**
Այլ ֆինանսական հոդվածներ	8	1985	(3124)
Արդյունք		**6860**	**10667**
Շահութահարկի գծով (ծախս)/եկամուտ		(344)	(1018)
Տարվա արդյունք		**6516**	**9649**

«ՔԱԹԸԼԻՍԹ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման հիմնադրամ
Տնօրեն Ս. Արզումանյան

«Գրիվեյ Ֆայնանս» ՓԲԸ
Տնօրեն՝ Վ.Մելիքսեթյան

«ՔԱԹԸԼԻՍԹ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման հիմնադրամի
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Անհատույց ստացումից մուտքեր	74501	170040
Ծառայությունների մատուցումից ստացված դրամական միջոցներ	3145	22243
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(24703)	(128119)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(10948)	(5692)
Վճարումներ պետական բյուջե	(11703)	(30828)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ մուտքեր	25	26950
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ արտահոսքեր	(25798)	(5692)
Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	**15467**	**27644**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերումից	0	0
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Փոխառությունների ստացումից/մարումից	(63470)	0
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերից	(63470)	0
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	(48003)	**13322**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	**64311**	**55518**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	1958	(986)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**18266**	**64311**

«ՔԱԹԸԼԻՍԹ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման հիմնադրամ
Տնօրեն Ս. Արզումանյան

«Ֆրիվեյ Ֆայնանս» ՓԲԸ
Տնօրեն՝ Վ.Մելիքսեթյան

Հիմնադրամը քաղաքացիների և իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է: Հիմնադրամը սեփական կապիտալի տարրեր չունի: Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքը վերագրվում է զուտ ակտիվներին:

«ՔԱԹԸԼԻՍԹ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման հիմնադրամ
Տնօրեն Ս. Արզումանյան

«Ֆրիվեյ Ֆայնանս» ՓԲԸ
Տնօրեն՝ Վ.Մելիքսեթյան

«ՔԱԹԸԼԻՍԹ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման հիմնադրամի Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթություններ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Քաթըլիսթ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման» հիմնադրամը(այսուհետ՝ Հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է:

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին,այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

Հիմնադրամը իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2017թ. հունիսի 6-ին,գրանցման համարնէ 222.160.963879: Հիմնադրամի կանոնադրության փոփոխությունները վերագրանցվել են 2021թ. հուլիսի 7-ին իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից:

Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վաղարշյան 1. բն. 46:

1.2 ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հիմնադրամի նպատակներն են .

Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում.

- ✓ կրթական և հետազոտական աշխատանքների իրականացում,
- ✓ ոլորտի ընկերությունների զարգացման աջակցություն,
- ✓ հետազոտական աշխատանքների իրականացում և խրախուսում,
- ✓ համակարգչային նախագծերի նախագծում և իրականացում,
- ✓ ոլորտի ընկերությունների համար նյութատեխնիկական բազայի և մարդկային ռեսուրսների ապահովում:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

Հիմնադրամն իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է հաշվեգրման հիմունքով, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը հանդիսանում է Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Անընդհատություն

Հիմնադրամն իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է անընդհատության հիմունքով:

Աուդիտի ընթացքում պարզվել է, որ Հիմնադրամը 2023թ-ին գործել է անընդհատ և 2024թ-ին նույնպես կգործի անընդհատ:

3. ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

4.1 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հիմնական միջոցների միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, չափվում է իր սկզբնական արժեքով: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական արժեքի մոդել

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումներ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացվում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում դրանց տեղի ունենալու ժամանակ

Մաշվածություն

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում բացառությամբ, եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արդյունքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

- ✓ Արտադրատնտեսական գույք, գործիքներ 8 տարի
- ✓ Հաշվողական և համակարգչային տեխնիկա 1 տարի
- ✓ Այլ հիմնական միջոցներ 8 տարի:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

- ✓ Համակարգչային ծրագրեր 10 տարի

4.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, դասակարգվում են ՝

- Փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընդհանուր առմամբ, Հիմնադրամի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ»կամ «Այլ Ֆինանսական արդյունքներ» հոդվածներում,բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը:

Ֆինանսական պարտավորություններ

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այդ արժեքի

և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.3 ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Հիմնադրամն իր գործունեության և իրավական բնույթից ելնելով բաժնետիրական կապիտալ չունի:

4.4 ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Հիմնադրամն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

4.5 ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: 2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը 404.79 դրամ է (2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 393.57):

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես այլ ոչ գործառնական եկամուտ կամ ծախս:

4.6 ՇՆՈՐՀՆԵՐ

Ակտիվներին վերաբերող շնորհների հիմնական պայմանն այն է, որ դրանց ստացման իրավունք ունեցող կազմակերպությունը պետք է գնի, կառուցի կամ որևէ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ:

Եկամուտներին վերաբերվող շնորհները ակտիվներին վերաբերվող շնորհներից տարբերվող շնորհներ են:

Շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում պարբերաբար այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Որոշակի ծախսերի համար տրված շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն ժամանակաշրջանում, որում ճանաչվում են այդ համապատասխան ծախսերը: Նմանապես, մաշվող (ամորտիզացվող) ակտիվներին վերաբերող շնորհները սովորաբար ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանների ընթացքում և այն համամասնություններով, որոնք համապատասխանում են այդ ակտիվների մաշվածության ծախսերի ճանաչմանը: Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է կազմակերպությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես նվազեցում ակտիվի հաշվեկշռային արժեքը որոշելիս: Այսինքն շնորհը նվազեցվում է ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվարկելիս և արտացոլվում է շահույթում կամ վնասում մաշվող (ամորտիզացվող) ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ նվազեցված մաշվածության ծախսի ձևով:

4.7 ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

5. ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄՈՒՏՔԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հազար դրամ	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Անհատույց մուտքերից եկամուտներ	39634	28249
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	26345	162709
Ընդամենը	**65979**	**190958**

6. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	**2023թ.**	**2022թ.**
Աշխատավարձ և նրան հավասարեցված վճար	(30051)	(116461)
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	(1297)	(1334)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	(475)	(34150)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	(534)	(722)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(2493)	(2686)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(2770)	(5140)
Բանկային ծառայության և ապահովագրական ծախսեր	(53)	(310)
Տարածքի վարձակալության ծախսեր	(14999)	(15266)
Այլ վարչական ծախսեր	(15892)	(1098)
Ընդամենը՝	**(68564)**	**(177167)**

7. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Գործառնական եկամուտներ պահուստների գծով	6135	-
Այլ գործառնական եկամուտ	3316	-
Ընդամենը	**9451**	**-**

8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ, ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	**2023թ.**	**2022թ.**
Ֆինանսական եկամուտ, այդ թվում՝	1991	-
✓ արտաժույթի փոխարժեքային դրական տարբերությունից եկամուտ	1991	-
Ֆինանսական ծախսեր, այդ թվում՝	(6)	(3124)
✓ արտաժույթի փոխարժեքային բացասական տարբերությունից ծախս	(6)	(2)
Զուտ ֆինանսական եկամուտ (ծախս)	**1985**	**(3124)**

9. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար դրամ	Մեքենաներ, սարքավորումներ	Արտադրատնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Մնացորդը առ 01 հունվարի 2022թ.	**2951**	**6640**	**916**	**10507**
Ավելացումներ			60	60
Օտարումներ				
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**2951**	**6640**	**976**	**10567**
Մնացորդը առ 01. հունվարի 2023թ.	**2951**	**6640**	**976**	**10567**
Ավելացումներ		86		86
Օտարումներ				
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**2951**	**6726**	**976**	**10653**
Մաշվածություն				
Մնացորդը առ 01 հունվարի 2022թ.	**1824**	**4500**	**623**	**6947**
Տարվա մաշվածություն	**331**	**700**	**121**	**1188**
Օտարումներ				
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**1824**	**4500**	**623**	**6947**
Մնացորդը առ 01. հունվարի 2023թ.	**1824**	**4500**	**623**	**6947**
Տարվա մաշվածություն	**312**	**720**	**121**	**1154**
Օտարումներ				
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**2136**	**5220**	**745**	**8101**
Հաշվեկշռային արժեքը				
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	1127	2140	353	3618
Առ 31 դեկտեմբերի 2023թ	815	1506	231	2552

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ

Հազար դրամ	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	67783	67783
Ընդամենը	**67783**	**67783**

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է ք.Երևան,Բարբյուսի թիվ 2/1 հասցեում վարձակալված տարածքում: Նշված տարածքը վարձակալվել է 2017թ. հոկտեմբերի 18-ին համասեփականատերեր Արտակ և Նարեկ Ղազարյաններից և Լիլիթ Խաչատրյանից,որոնց հետ կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, տասը տարի ժամկետով, ամսական 889000 հազար դրամ վարձավճարով,առանց հարկերի:

11. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հազար դրամ	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Ոչ նյութական ակտիվներ	1001	1145
Ընդամենը	**1001**	**1145**

12. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Առևտրային դեբիտորական պարտքեր	360	5884
Տրված կանխավճարներ	32	-
Այլ ընթացիկ ակտիվներ	99	-
Ընդամենը	**491**	**5884**

13. ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ ՀԱՐԿԵՐԻ ԳԾՈՎ

Հազար դրամ	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Հարկերի միասնական հաշիվ	1660	-
Ընդամենը	**1660**	**-**

14. ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՓԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Տրամադրված կարճաժամկետ փոխառություն	63470	-
Ընդամենը	**63470**	**-**

31.12.2023թ. դրությամբ նշված հաշվով հաշվառվել է Հիմնադրամի կողմից տրամադրված անտոկոս փոխառության գումարը: Նշված 63470,0 հազար դրամը տրամադրվել է ներքոնշյալ ընկերություններին՝

- ✓ «Մանոթ» ՍՊԸ 10524,0 հազար դրամ,
- ✓ «Էմէլ Լաբս» ՍՊԸ 21049,0 հազար դրամ,
- ✓ «Բութքամփ» ՍՊԸ 10524,5 հազար դրամ,
- ✓ «Պրիոտիկս» ՍՊԸ 10624,5 հազար դրամ,
- ✓ «Ին Սիլիկո» ՍՊԸ 10747,5 հազար դրամ:

Նշված փոխառության համար ներկայացվել է պայմանագիրը և 31.12.2023թ. պարտավորությունը հավաստող փոխադարձ ակտի պատճեն:

15. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Հազար դրամ	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Կանխիկը դրամարկղում	-	-
Դրամական միջոցների մնացորդը բանկային հաշիվներում	18266	64311
Ընդամենը	**18266**	**64311**

Նշված մնացորդների համար Հիմնադրամի կողմից ներկայացվել են գույքագրման ակտ և տեղեկանք բանկից:

16. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ

Հազար դրամ	**31.12.2023թ.**	**31.12.2022թ.**
Կուտակված արդյունք	5645	(871)
Ընդամենը	**5645**	**(871)**

31.12.2022թ. դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ զուտ արդյունքը կազմել է -871 հազար դրամ վնասը: 2023թ. ընթացքում Հիմնադրամի զուտ արդյունքը կազմել է 102524.0 հազար դրամ և արդյունքում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի զուտ ակտիվները կազմել են 5645,0 հազար դրամ,այդ թվում՝ **5645,0 հազար դրամ չբաշխված շահույթ:**

17. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՎՃԱՐՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ

Հազար դրամ	31.12.2023թ.	31.12.2022թ.
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ	57309	57309
Ընդամենը	**57309**	**57309**

18. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	31.12.2023թ.	31.12.2022թ.
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս	10474	10474
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2131	829
Ստացված կանխավճարներ	64682	53552
Ընդամենը	**77287**	**64855**

19. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ	31.12.2023թ.	31.12.2022թ.
Պարտքեր շահութահարկի գծով	330	982
Պարտքեր ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով	14	-
Պարտքեր եկամտային հարկի գծով	3093	-
Պարտքեր սոցվճարների գծով	297	-
Ընդամենը	**3734**	**982**

20. ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԳԾՈՎ

Հազար դրամ	31.12.2023թ.	31.12.2022թ.
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	11248	20466
Ընդամենը	**11248**	**20466**

21. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Հիմնադրամը ենթարկում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Հիմնադրամի ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումներ:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Հոգեբարձուների խորհրդին իր գործունեության վերաբերյալ:

Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Հիմնադրամի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

(բ) Պարտքային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Հիմնադրամի նկատմամբ: Հիմնադրամը ցուցաբերում է առանձնահատուկ մոտեցում պայմանագրային յուրաքանչյուր կողմի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում գործընկերներից ստացվելիք դեբիտորական պարտքերի և կապակցված կողմերին տրված վարկերի գծով:

(գ) **Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր**

Վարկային ռիսկին Հիմնադրամի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր գործընկերոջ առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև գործընկերների բազայի կառուցվածքը, ներառյալ տվյալ ոլորտի հաճախորդի ու երկրի կողմից հանձն առնված պարտականության չկատարման ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ վարկային ռիսկի վրա:

Հիմնադրամը ձևավորում է արժեզրկման գծով պահուստ, որն իրենից ներկայացնում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով կրած վնասների Հիմնադրամի գնահատականը: Այս պահուստը վերաբերում է անհատական հիմունքով ռիսկի զգալի գործոն պարունակող պարտքերին, որոնք արժեզրկված են:

(դ) **Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ**

Համաձայն «Փոխկապակցված կողմերի բացահայտում» ՀՀՄՍ 24–ի՝ կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Հիմնադրամի ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից: Հաշվետու տարում Հիմնադրամն իր փոխկապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ գործարքները

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամը կապակցվող կողմերի հետ գործարքներ չի կատարել:

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի ղեկավար անձնակազմի հետ կատարվել է 6513.0 հազար դրամի գործարք/վճարվել է աշխատավարձ/ նախորդ տարվա ընթացքում այն կազմել է 22507,0 հազար դրամ:

(զ) **Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Հիմնադրամի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Հիմնադրամի համբավը վտանգելու: Հիմնադրամը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը ծածկելու համար ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

(է) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(ը) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ: Այս գործարքները հիմնականում արտահայտվում են եվրոյով և ԱՄՆ դոլարով: Փոխառությունների գծով տոկոսներն արտահայտված են փոխառության արտարժույթով: Որպես կանոն փոխառություններն արտահայտվում են այն արտարժույթով, որը համապատասխանում է Հիմնադրամի համապատասխան գործառնություններից առաջացող դրամական միջոցներին: Այսպիսով, առաջանում է տնտեսական հեջավորում՝ առանց ածանցյալ գործիքների օգտագործման:

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	Միջին դրույք	
	2023թ.	**2022թ.**
ԱՄՆ դոլար	404,45	394,52
ԵՎՐՈ	**441,70**	**417,79**

(թ) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածության չափը որոշող քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր փոխառություններ տրամադրելիս ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելը:

22. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

(ա) ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

Հիմանդրամը բավարարում է ՀՀ կառավարության պահանջները կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

(բ) ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամն ամբողջությամբ վերահսկվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից:

(գ) ՀԱՐԿԱՅԻՆՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Հարկային պարտավորությունները Հայաստանում**

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

«ՔԱԹԸԼԻՍԹ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման հիմնադրամ
Տնօրեն Ս. Արզումանյան

«Ֆրիվեյ Ֆայնանս» ՓԲԸ
Տնօրեն՝ Վ.Մելիքսեթյան